

Սերունդ տվող կենդանիների սննդի պահանջը

Գյուղատնտեսության մեջ անասնաբուծության առաջատար ճյուղը համարվում է տավարաբուծությունը, որը տնտեսապես արդյունավետ է և եկամտաբեր: Բացի մթերատվությունից, տավարաբուծության զարգացման ամենակարևոր նախապայմաններից մեկը կենդանիներից արժեքավոր սերունդ ստանալն է, որի կարևորությունն էլ կայանում է նրանում, որ յուրաքանչյուր սերունդ իր մթերատվությամբ գերազանցի նախորդ սերնդին: Այդ առումով ամենահուսալին արհեստական սերմնավորման մեթոդի կիրառումն է: Ճիշտ ժամանակին սերմնավորում կատարելը, կենդանիների ճիշտ կերակրումն ու խնամքը, հաջող ծինը և ստացված սերնդի լավ աճեցումը լուծում է նախրի վերարտադրման խնդիրը: Այս հարցերի վրա պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունները:

Գյուղատնտեսական կենդանիների առողջ սերունդ տալը՝ վերարտադրությունը, մեծ չափով կախված է նրանց սննդի պահանջի բավարարումից: Անբավարար կերակրման հետևանքով կենդանիների հղիությունն ավելի երկար է տևում, խանգարվում է օրգանիզմի նյութափոխանակությունը, կովը նիհարում է, վատանում է առողջությունը, խախտվում է սեռական շրջափուլը, չի կատարվում ձվազատում, երբեմն հղի կենդանիները վիժում են կամ էլ նրանց պտուղը ներծծվում է արգանդում: Կենդանիների ստերջության տոկոսը առանձնապես մեծ է լինում այն տարիներին, երբ բնական պատահարների՝ երաշտի կամ այլ պատճառով կերի խիստ պակասություն է լինում: Կենդանիների սերնդատվության վրա ազդում է ոչ միայն սննդի ընդհանուր քանակը, այլև կերի մեջ եղած առանձին սննդանյութերի (կերի միավոր, մարսելի պրոտեին, կալցիում, ֆոսֆոր, կարոտին և այլն) քանակն ու որակը:



Ուսումնասիրությունները պարզել են, որ էգ կենդանիներին ոչ բավարար քանակությամբ կամ ոչ լիարժեք **մարսելի պրոտեին** պարունակող կերաբաժիններով կերակրելիս նրանք կարող են անպտուղ դառնալ: Կերաբաժնում մարսելի պրոտեինի քանակը ավելացնելու կամ որակը լավացնելու դեպքում կենդանիները նորմալ կերպով բազմանում են: Միաժամանակ պետք է նշել, որ չի կարելի միակողմանի, չափից ավել, մեծ քանակությամբ կերակրել:

Գիտական փորձերը ցույց են տվել, որ շատ հաճախ կենդանիների ստերջության և վիժումների պատճառ կարող են հանդիսանալ կերերում այս կամ այն հանքային

նյութերի պակասությունը: Խոտի մեջ բավարար քանակությամբ **ֆոսֆոր** չլինելու և բավարար **կերամիավոր** չապահովելու դեպքում անասունների հոտում ստերջության և վիժումների քանակը մեծանում է, ուստի անասուններին պետք է կերակրել բարձրարժեք խոտով (կորնգան, առվույտ): Կենդանիների պտղատվությունը խիստ կերպով ընկնում է նաև նրանց **կալցիումով** աղքատ կերաբաժիններով կերակրելու դեպքում: Այսպիսով՝ առողջ սերունդ ստանալու համար կենդանիներին մեկ կերի միավորի հաշվով պետք է տալ 105-110գ մարսելի պրոտեին, 10-12գ կալցիում, 7-8գ ֆոսֆոր և 40-50մգ կարոտին: Կերաբաժնում խտացրած կերերը պետք է ապահովեն անասնակերերի սննդարարության 20-30%-ը (2-2.5կգ), խոտը՝ 25-30%-ը (5-6կգ), սիլոսը՝ 15-20%-ը (մինչև 10կգ), ինչպես նաև վիտամիններ և հանքային լրացակերեր:

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից կողմից, տարածաշրջանում իրականացվող «Անասնակերի արտադրության արդյունավետ փորձի խթանում թիրախային համայնքներում» ենթածրագրի շրջանակներում ընդգրկված մի շարք ֆերմերներ մշակել են բարձրարժեք կերատեսակներ և իրենց կենդանիներին ապահովել վերը նշված սննդակարգով: Այսպես օրինակ՝ ենթածրագրում ընդգրկված ֆերմերներ Լևիկ Սաֆարյանը, Հայկ Հայրապետյանը, Ալինա Աղաբեկյանը, կենդանիներին կերակրելով կորնգանի և առվույտի լավորակ խոտով, ինչպես նաև կերի ճակնդեղով ու խտացրած կերերով, կովերի կաթնատվությունը ավելացրել են 4-5 լիտրով, իսկ կիրառելով արհեստական սերմնավորման մեթոդը՝ ստացել ցեղային հատկանիշներով օժտված առողջ սերունդ, որը հետագայում կապահովի բարձր մթերատվություն և հոտի վերարտադրություն: